դուրս գայ հայի երես չտեսնելու համար երեսն քող կը ձգէ, հարիւրաւոր մարդեր կուղեկցին նմա, ուր որ պատուէ երեսը պիտի թքէ, մրխաներն «ահ, ուհ» անելով շուրջ շարուած կը հետեւին:

10· ԴԱՄԷ·—Գիւղս Համզկանից $^1/_2$ ժամ յարեւմուտս բարձր դիրքի մի վերայ կառուցուած է, 14 տ· ք· բնակիչներով:

11· ԱՊՏԷ—ԱԽՏԷ (Երկու ջուր)·—Դաշէից 1 $^1/_2$ ժամ հարաւ է, որ ունի 8 տուն ք· բնակիչ:

12· ՊՈԽՊԷ·—Ունի 12 տուն՝ ք· բնակիչ 10 վայրկեան հեռի Ապտէից:

13· ՊԱՏԼՑԻՔ[1]·—Պուպէից 1 ժամ ի հիւսիս, 21 տուն ք· բնակիչ:

14· ԴԱՐԱՄՈԽ·—Պատլցոց $^1/_2$ ժամ հարաւ, 15 տուն հայ կաթոլիկ և 15 տուն քուրդ բնակիչ:

15· ՆԵՐՔԻՆ ՊԱԽԸՆՑԻՔ·—$^3/_4$ ժամ Դարասուից հիւսիս, 13 տուն ք· բնակիչ:

16· ՀԱՃԻ ԽԱՆՈՑ —$^1/_2$ ժամ Պաւնցոց հարաւն 5 տուն ք· բնակիչ:

1· Հայ ժողովուրդն քրդերու ան անէ խանէ յոքնականացուցիչ մասնիկը ցի՛ք կը հնչէ, որոյ համար ըստ հայ ժողովրդեան Պատլցի՛ք, Մաուրցի՛ք, Միրանկցի՛ք, եւլն· գրած եմ միշտ: